

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռ. Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ». կամ Tiflis Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ՆԵՐԿԱՅ 1890 ԹԻՒՎԱԿԱՆԻՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՐՂԱՔԱՆԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոզրամայով: Մենք ստանում ենք սեփական ՀեՌՍՏՐՈՒՆԵՐԻ. «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի. Կրկին «ՄՇԱԿԻ» կարելի է խՄԲԱԳՐԱՏԱՆՔ (Բարձրագույն և Բարձրագույն փոքրերի անկախ-նում, Թամանիսի տանը). Կաղարկման ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով: ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ռուսաց մամուլը. Նամակ Բագուցի. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Շիլլերի խմբագրից. Արտաքին լուրեր. —ԽԱՆԻ ԼՈՒԿՆԻ. —ՀեՌՍՏՐՈՒՆԵՐԻ. —ԲՈՐՄԱ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նոր տեսակի սարուկներ. Հայոց առանձին յատկա-նիշ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՅ ՄԱՍՈՒԼՔ

Մոսկվայի օրագիրներից ուշագրութեան արժանի մնում է «Русскія Вѣдомости», որ, ինչպէս անցի, կովիտուսում համարեա անյայտ է: Թիֆլիսի լրագրական գործակալութեան մէջ ընդունվում է բաժանորդագրութիւնը Ռուսաստանի բոլոր թէ մեծ և թէ մանր մուր լրագիրների. կարողա՞ւ այդ թերթերից ցանկը եւ զարմացմամբ նկատեցի, որ չէ յիշված «Рус. Вѣд.» և ընդհակառակը յիշված է օրինակ «Моск. Листокъ», որ կարող է հետաքրքրական լինել միայն Մոսկվայի ոչ ինտելիգենտ ընթերցողների համար—պրի-կա չի կենսից սկսած և վերջացնելով տրա կա-ն իրն երբ ժողովուրդներով—իր մանրամասն տեղեկութիւններով Մոսկվայի զանազան ծայրերում կատարված սկանդալները մասին: Ամուսնու ռուբլի Թիֆլիսում հատով առնել «Рус. Вѣд.», չը գտայ: Այդ շատ ցաւալի է, որովհետև «Рус. Вѣд.» լրագիրը այժմ Ռուս ինտելիգենցիայի ամենահամակրելի մասի ամենատարածված և ամենապիտան օրգանն է (խօսքը օրագիրների մա-

սին է): Նա 1889 թ. օւնէր 22.000-ից ասելի բաժանորդ, չը հաշվելով այն քաղաքացի ամա-կան բաժանորդներին, որոնք խմբագրութեան մէջ չեն գրվում, այլ ստանում են փոքրիկ քանակությամբ լրագրի ծախողները. եթէ դրա վրա անկաց-նենք անգիրն քանակութեամբ հատով ծախվող համարները, մասնորայէս գաղափար կը ստա-նանք «Рус. Вѣд.» ընթերցողների իսկական թի-վան: «Рус. Вѣд.» չափաւոր, բայց հետևողական (последовательный) և անկեղծ ազատամիտ ուղ-ղութիւն ունի: Պահպանողական լրագիրները յար-ձակվելով նրա վրա, նրան պրոֆեսորական լրա-գիր են անուանում, որովհետև խմբագիրներից և մշակման աշխատակիցներից շատերը Մոսկվայի համալսարանի պրոֆեսորներն են և պէտք է ա-սել ամենալաւ պրոֆեսորները. (խմբագիրներից մէկը հայ է—Փաստարան Զանշինով) «Рус. Вѣд.» պատկանում է այն սակաւթիւ լրագիրների թիւին, որոնք սրբութեամբ պահպանում են Ռուս պարբերական զրականութեան լաւ ժամանակների աւանդութիւնները, որոնք ասելի բարձր են դա-ստով զրականութեան շահերը խմբագիրների զբաղմանը և չեն աշխատում բաժանորդ որոտու-համար յարմարել ընթերցողների ժամանակակից պահանջներին ու զանազան ազգային հանգա-մանքներին: Ռուսաց լուր մեծ լրագիրներ, օր-նակ, «НОВОСТІ» և «НОВОЕ ВРЕМЯ», մանաւանդ վերջինը, բաժանորդներ գրաւում են իրանց լու-րերի առատութեամբ, որոնք մեծ մասամբ սուտ են դուրս գալիս և հերքվում են լրագրի հետեւեալ համարներում, բայց այնու ամենայն իրանց ազ-դեցութիւնը գործում են ընթերցողների վրա, —կուլտուրական, բայց ոչ ինտելիգենտ (բառիս աս-մենաբարձր նշանակութեամբ) ընթերցողների վրա.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆՈՐ ՏԵՍԱԿԻ ՍՏՐՈՒՆԵՐ

Ողբ ստրկացածները միշտ մի առանձին ճգն-տում են ունենում իշխանութիւն բանեցնել մեծ անկիւններում: Ո՞վ չը գիտէ որ, եթէ լակելի ե-րեսին սպառք, նա կը կորցնէ զէպի ձեռք իր կամքող պատկառանքը, մինչդեռ այդ մի և նոյն լակելը չափազանց յարգանքով է վերաբեր-վում զէպի իր այն աղան, որի ամենաբնորոշ խօսքը լուրի յիմար) նախադասութիւնն է: Ստրկութիւնը, ստրկական ուղին յատուկ չէ մի-այն լակելիներին, զժրագողաբար, դա մի այնպիսի յատկութիւն է, որ շատ անգամ մարդուս մէջ մնում է նոյն իսկ համալսարանի աուդիտորիա-յում և յետոյ ընկերանում է նրան կենքի մէջ: Հեռու չը գնանք, վերցրէք մեր նոյն իսկ բարձր ունում ստացածներից շատերին: Գրանցից շա-տերին դուք կը տեսնէք որ և է պաշտօնական

հաստատութեան մի սենեակում, շատ համեստ գաւի պէս, ուղղուած, փայտ կուլ տուած կլու-նի պէս՝ կանգնած լուսւ են իրանցից մեծի հրա-մանները: Այդտեղ մեր պարուն համալսարանա-կանը գառն է, խոնարհ է, նա այդտեղ կարող է համաձայնել, որ 2×2=5, նա այդտեղ ներողա-միտ է զէպի իրանից մեծի թերութիւնները: Բայց երբ այդ պարուն համալսարանականը դուրս է գալիս փողոց և պատահելով հասարակական գոր-ծերի մէջ մասնակցող մէկին, կամ մի հայ ու-սուցչին, խօսում է ազգային կամ հասարակա-կան գործերի վրա, տեսէք դուք նրա պրիտէ-զիաները: Այդ ողորմելի առեւծի մօրթի է հագնում, անկէքներ է թափում, հաշիւ է պա-հանջում այն և այն ներք որ զորոզ պատկառելի հաստատութիւններից, որոնցով de facto չէ էլ հետաքրքրվում, և որոնց գործունէութեան մա-սին հասկացողութիւն էլ չունի... Գրանք մինչև անգամ խնամակալներ էլ չեն, այլ նրանից ասելի ստոր, արհամարհանքի ար-ժանի էակներ: Փորձեցէք դրանց մօտ ասել, թէ այն ինչ զրականական խաչաքողը կերել

բաւական է, որ նոր լուր լինի, ցնցի ջրերը, իսկ թէ դադը այդ լուրը սուտ դուրս կը գայ, ոչ չինչ, ասելի լաւ, նրա տեղ մի ուրիշ լուր կը տպվի: Այդպիսով լրագրի աջողութիւնը նմանում է բամբասաւէր պառուհների աջողութեանը, որոնց առջ ամենքի դուռը բաց է: Այդ կողմից «Рус. Вѣд.» լրագիրը ազատ է, նա շատ քիչ ցնցող լուրեր է պարունակում և այդ նա անում է դիտմամբ, դիտակցաբար. նա չէ ուղում գրը-դուել ընթերցողների ջրերը, այլ նրան տալ մտա-ւոր առողջ սնունդ: «Рус. Вѣд.»-ի ամենահետա-քրքրական մասը ներքին հարցերին վերաբերեալ յօդուածներն ու բանասիրականն են: Ամեն օր նա տալիս է լուր յօդուածներ Ռուսաստանի հասարակական, տնտեսական, իրաւարանական հարցերի մասին, յօդուածներ, որոնք պատկա-նում են պրոֆեսորների և մասնագետների գրը-չին: Բանասիրական մասում գրում են Ռուսաց ամենատաղանդաւոր և ամենահամակրելի բե-լետրիստները և հրապարակախօսները, ինչպէս Ն. Միխայլովսկի, Գ. Ուպենսկի, Ն. Ջլատո-վրատսկի, Կորոլնիկ, Մաչտո, Ե. Եմբոտով և այլն: Շչեդրին նոյնպէս աշխատակցում է «Рус. Вѣд.»-ին: Առհասարակ «Рус. Вѣд.»-ի այդ յօ-ղուածները լրջութեամբ և զրականական արժա-նաւորութիւններով կարող են մրցել ամենալաւ ամսագիրների հետ: Աւելորդ է խօսել «Новое Время»-ի մասին, որովհետև նա իր վարկը, զոնէ հասկացողների աչքում, բոլորովին կորցրել է: Սկզբում, երբ որ ձեռնուտ էր, նա իրան ազատամիտ էր հուշա-կում, թէ և ինչ այն ժամանակ բաւական երկ-միտ ազատամիտ ուղղութիւն ունէր. յետոյ բո-լորովին ձեռք բռնեց այդ անուսից և անցաւ պահպանողականների կողմը, որոնցից շատերից նրանով է ցած, որ ոչ այնքան պահպանողական ուղղութիւնն է իր համար թանգ, որքան բաժա-նորդի զբաղման. պահպանողական հայեացքները նրա համար նոյնպիսի միջոցներ են աջողու-թեան համար, ինչպէս և բալետը.—բալետով շա-տերն են հետաքրքրվում և հաճախ լինում է է-ջերը բալետի նկարագրութեամբ: Թէ ինչպէս է վերաբերվում նա տարագրիներին, այդ էլ ասել չի լինի.—էլ ցելն չէ մնում, որ չը թափի նրանց զլխին, որից մի պատկառելի բաժին մեզ հայե-րիս է հասնում, բայց մենք շատ բարեխիղճ ենք, շնորհակալութիւն ենք անում խմբագրին և ու-ղարկում նրան բաժանորդագիրը: «НОВОСТІ» անհամեմատ բարձր է «НОВОЕ ВРЕМЯ»-ից: Նա ազատամիտ ուղղութիւն ունի, թէ և անտարական տեսակէտը նրա գործերում ասելի մեծ դեր է խաղում, ըստ ազատամտու-թիւնը. ունի լաւ աշխատակիցներ, որ. պ. Սկա-

րիչեկովի (որի ժողովրդականութիւնը, պէտք է ասել, ընկել է այժմ չնորհիւ նրա յօդուածների «НОВОСТІ»-ում), բայց և այնպիսի յօդուածներ է տպում, որոնցից հրատարակով կը հրատարի ամեն մի ճշմարիտ առաջադիմական ժողովրդի ամեն մի անկեղծ բարեկամ: Ռուս գրականու-թեան առաջնակարգ զործիչները իրանց հեռու են պահում «НОВОСТІ»-ից: Ամսագիրները առհասարակ ասելի բարձր են օրագիրներից: Այդ բացատրվում է նրանով, որ նրանց ընթերցողների կոնտինգենտը կազմվում է կրթված դասակարգի ամենաբարձր խաւերից, այդտեղ կիսակրթ կուլտուրական մասսան ճըն-չում չէ գործում խմբագիրների վրա, սակայն զը մնում է ճշմարիտ, իսկական ինտելիգենցիան: Չօրս ամենանշանաւոր ամսագիրներից երեքը՝ «Рус. Мысль», «Вѣстн. Европы» և «Сѣв. Вѣстникъ» առաջադիմական ուղղութիւն ու-նին, իսկ մէկը՝ «Рус. Вѣстникъ» նոյն ուղղու-թիւնն ունի, ինչ որ «Моск. Вѣдомости» լրագի-րը. առաջ նա Մոսկվայում էր հրատարակվում, և նրա ու «Моск. Вѣд.»-ի խմբագրութիւնը ընդ-հանուր էր: Ոչ մի ժամանակ նրա գործերը լաւ չեն գնացել, իսկ կատովի մահից յետոյ բաժա-նորդները ասելի էլ քչացել են: «Вѣстн. Европы» յայտնի է իր լուրջ յօդուածներով և հետադի-մականութեամբ, բայց մի քիչ չոր է: Հրատա-րակվում է Պետերբուրգում. «Сѣв. Вѣстн.» շատ է հետաքրքրվում ժողովրդին վերաբե-րեալ հարցերով. սկզբում շատ մեծ յոյսեր գար-ծեցրեց երիտասարդութեան մէջ, բայց այժմ ամենալաւ աշխատակիցները, ինչպէս Ն. Մի-խայլովսկի և Գ. Ուպենսկի հեռացել են. հրա-տարակվում է Պետերբուրգում. «Рус. Мысль» ընդհանրապէս վերցրած բարձր է այդ երկուսու-նից էլ և ամենատարածված ամսագիրն է: Ունի 12.000-ից ասելի բաժանորդներ, մինչդեռ «Вѣст. Европы»-ի բաժանորդների թիւը 7.000-ից պա-կաս էր այն ժամանակ, երբ տպվում էին նրա մէջ Շչեդրինի յօդուածները, այժմ, ի հարկէ, աս-ելի քիչ կը լինի: «Сѣв. Вѣстникъ»-ը իր ամե-նալաւ ժամանակը հաշոււ էր մօտ 4.000 բա-ժանորդ: «Рус. Мысль»-ը հրատարակվում է Մոսկվայում: Ամսագիրներից կարելի է յիշել և «Русск. Богатство», որի առաւելութիւնը գիտնական յօդուածներով (մեծ մասամբ թարգ-մանական) հարուստ լինելու է: Որպէս զի ասելի պարզ լինի, ընթերցողների համար, պէտք է ասելանցնել: ով որ հայ լրագիր-ներից համակրում է «Մշակի» ուղղութեանը, ա-զատ կարող է բաժանորդ գրվել «Рус. Вѣдом.» լրագրին և «Вѣстн. Европы», «Сѣв. Вѣстн.» և «Рус. Мысль» ամսագիրներին: Կարելի է վա-

Шумимъ, братецъ, шумимъ! * * * * * U. 4. ՀԱՅՈՑ ԱՌԱՆՆԵՐԻ ՅԱՏԿԱՆԵՐԸ * * * * * Նկատել էք, արդեօք, ընթերցող, որ հայոց գրեթէ բոլոր առանձիններում և ասացուածներում անպատճառ է չի անունը կայ, չը նայելով, որ նոյնանման իմաստ պարունակող երօրայական առանձիններում և ասացուածներում ամենին էլ չը չէ յիշվում: Այս մի քանի օրինակներ * * * * * Il est assis sur son dada (ձի է նշանակում), —հայերեն ուրիշ կերպ չէ կարելի թարգմանել, եթէ ոչ՝ «իր է չն է քշում»: * * * * *

ն աչարին «Нодья» շարժաթերթն էլ աւե-
ացնել զրանց վրա: «Рус. Вѣд.» բաժանորդա-
դիրը, ճանաչարձածախսով, 11 թ. է. հասցէն՝
Москва, Чернышевскій переулок, խմբագրու-
թիւնը:

Անցնե՞ր մասնագրտական թերթերին, որոնցից
կարող եմ խօսել՝ Մոսկվայում հրատարակվողնե-
րի մասին: Մոսկվայի իրաւաբանական ընկերու-
թիւնը հրատարակում է «Юрид. Вѣстникъ» ամ-
սագիրը, որ բացի իրաւաբանական յօդուածներէից
միշտ պարունակում է հետաքրքրական յօդուածներ
հասարակական գիտութեան բոլոր ճիւղերին վե-
րաբերելու հարցերի մասին: Խմբագիրը յայտնի
գիտնական Մարտիցին է, Մոսկվայի համալսա-
րանի նախկին պրոֆէսոր և իրաւաբանական ըն-
կերութեան նախագահ: Այդ ամսագիրն այս տար-
վայ յունիս-յուլիս համարում է միջի այլոց տըպ-
ված է յայտնի կովկասագէտ և Մոսկվայի հա-
մալսարանի նախկին պրոֆէսոր Մ. Կովալովսկու
յօդուածը «Գիւղական համայնքը Անդրկովկա-
սում» վերնագրով: Այդ յօդուածում յարգելի գիտ-
նականը, քննելով Ս. Երկազարեանի «Историко-
ванія по истории учреждений въ Закавказьи. Ч.
I. Сельская община» գրուածը, ի միջի այլոց
այն միտքն է յայտնում, որ «անցեալում Անդր-
կովկասի դիւղական համայնքը երկու խիստ հա-
կառակ տիպ է ունեցել—հայկական և վերական,
առաջինը հիմնված է եղել տնային (подворный),
երկրորդը՝ հողատիրութեան սկզբունքի վրա»:
Այդ տարբերութեան հետքերը մնացել են մինչև
այժմ,—վերացող համայնքը, մեր կարծիքով, շա-
րունակում է նա, այն էական տարբերութիւնն
ունի հայկականից, որ հիմնված է հողի առան-
ձին տնային վրա հաւասարակ է և իւրաքանչիւր
տան անդամների թիւից անկախ բաժանման սկզբ-
ունքի վրա, մինչդեռ հայկական համայնքը նախ և
առաջ բաժանային (дольной) համայնք է, որ հաւա-
սարեցնում է համայնակիցների կալուածական ի-
րաւունքները, ապով ամալին այս կամ այն հո-
ղաբաժինը այդ տանը պատկանող դոլդերի քա-
նակութեան համաձայն: Ի դէպ ասելը, շուտով
լոյս կը տեսնի յարգելի հեղինակի նոր գրուած-
քը կովկասի մասին, որի մէջ նա խօսում է և
հայերի մասին: Մոսկվայի հոգեբանական ընկե-
րութիւնը այս տարի սկսել է հրատարակել մի
ամսագիր «Философическіе и историко-научные
հարցեր» վերնագրով: ամսագրի աշխատակիցների,
ինչպէս և ընկերութեան անդամների մեծ մասը
անթափիղիկներ են, այնպէս որ ամսագիրը մե-
թափիղիկական բնուորութիւն կունենայ, թէև
խմբագիրը յայտարարում է, որ ամեն ուղղու-
թեան յօդուածներին համար բաց են ամսագրի
թերթերը: Պէտք է յիշել նոյնպէս «Артисты»
թատրոնական, երաժշտական և գեղարուեստա-
կան ամսագիրը, որը հրատարակվում է միայն
ձմեռվայ սեզոնի 7 ամիս: Պատկերազարդ է:

Մոսկվա. S. 6.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԹՅՈՒՆ

Յանվարի 18-ին

Ամիսս 28-ին պիտի կայանայ Բագուի Մար-
գարիտական ընկերութեան ընդհանուր ժողովը:
Այդ առիթով հարկատու են համարում ժողովի
անդամների ուշադրութիւնը հրաւիրել մի ամենա-
կարևոր հարցի վրա:

Ապարդին, դուք տեղ տանջվող մարդ.—un
pauvre diable, կամ աւելի լաւ է՝ un souffre-
douleur,—հայերէն՝ պէտք է ասել կամ «իշի
մարտիրոս», կամ «իշի նահատակ»:
* * *
Съ волками жить, по волчьимъ выть,—հայերէն՝
«ձիւնն որ է շի հետ կապես, նա անպատճառ
զաւլ կը սովորի»:
* * *

Գերմաներէն oehsen (եղան պէս աշխատել),—
հայերէն՝ «իշի պէս աշխատել»:
* * *
Вѣтъ, орннակ, ուղու՞մ էք ասել, թէ մէկը
տանջվում, աշխատում է, իսկ մի ուրիշը նրա
վատահամն է վայելում,—հայերէն՝ ուրիշ կերպ
էք կարող ասել, եթէ ոչ՝ «էշը դարձ, ձին ու-
տէ»:

Паны дерутся, а у хлопцевъ чумы болятъ,—
հայերէն՝ «իշ ա պաննի երբ իրար մէջ կուսցան,
էշերի մէջըը ցուցնց»:

Каковъ попь, таковъ и приходъ,—հայերէն՝

Ընկերութիւնը ունի մի գրադարան, ուր ըս-
տացվում են լրագիրներ, և ուր կան բաւական
քանակութեամբ գրքեր: Ամեն տեղ, ուր կայ մի
այդպիսի օգտակար հիմնարկութիւն, առհասա-
րակ գրադարանը նշանակում են մի այնպիսի անձն,
որ ոչ թէ միայն հասարակ շնչին հաշիւներ պա-
նել կարողանայ, այլ և ընթերցող հասարակու-
թեանը կարողանայ մատակարարել օգտակար
գրքեր, սրա համար իսկ, գրապահը պիտի լի-
նի գոնէ միջնակարգ ուսում ստացած և գար-
գացած մի անձ, որպէս զի գրատուն մտնող և
«մի լաւ դիրք տուր ինձ» ասող ուսանողներին
և նոր ընթերցողներին չը տայ Բուսկովայի, Մոս-
կվայի, Մայնրիդի և այլ այսպիսի վայրի ի վե-
րայ գրուածներ, որոնք լի են թունաւորութիւն-
ներով, անբնական էֆէկտով ճանաչարձորու-
թիւններով և դէպքերով... այլ գիտնայ ուղղել
նրանց ընթերցանութիւնը մի լաւ նպատակի,
աշխատել ոչ թէ շարունակ դուրձացնել «լաւ
գիրք» ուղղորդել, այլ ծանոթացնել նրանց ամե-
նալաւ գրողների հետ, գիտնայ հետզհետէ գար-
գացնել ընթերցանութիւնը...

Արդ, Մարգարիտական ընկերութեան այժմեան
գրապահը ոչ միայն չունի նոյն իսկ տարրական
ուսում, այլ և լիովին անընդունակ է այդ պաշ-
տօնի համար:

Գրապահը կարող է նոյնպէս մեծ դեր կատա-
րել գրքերի ընտրութեան մէջ՝ և եթէ Բագուի
ընթերցողները լուրջ մասը զանգատում է, որ
գրադարանը չունի ուշադրութեան արժանի չըր-
քեր, դրա պատճառը նոյնպէս գրապահն է, որին
թողված է բերել տալի գրքեր ընտրութիւնը, և ո-
րը միայն բերել է տալիս բովանդակ և բովանդակ...
Այս և այսպիսի այլ շատ փաստեր, որոնք երե-
ւան կը գան, եթէ ընդհանուր ժողովը զբաղվի
այդ խնդրով՝ համոզել են ընթերցողները լուրջ
մասին, որ ամբողջ Բագուի մտաւոր աշխարհը
կառավարող այդ գրապահը իր պաշտօնի համար
անընդունակ է, ուստի և պիտի փոխել նրան,
առանց մի օր իսկ կորցնելու:

Հրաւիրում ենք ընդհանուր ժողովի անդամնե-
րի ուշադրութեանը և կարծում ենք, որ նա ամ-
սիս 28-ի «ժողովը յետոյ փետրվարի 1-ից ըս-
կած» կունենայ մի նոր, թաքմ և զարգացած
գրապահ:

Ընթերցողներին մէկը

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Կարող ենք հաղորդել մեր ընթերցողներին, որ
առաջիկայ փետրվար ամսին կառավարչական
տպարանը խոստանում է մեզ տպագրել «Մշա-
կը» նոր ձուլած տառերով:

Լուում ենք հաստատ աղբւրներէից, որ երկու-
շաբթի, յունվարի 29-ին, թիֆլիսի թատրոնում
կը ներկայացվի Գաբրիէլ Սուլիզուկեանցի
նոր պիեսան «Ամուսիններ» վերնագրով: Պիեսան
կը ներկայացնեն մեր սիրողները: Անս նրանց
անունները. տ.տ. Հ. Աֆթանդիլեան և Մ. Խոս-
րովեան, օր. օր. Ն. Եղաբեգեան, Գ. Խիթա-
րեան, և Մ. Մելիք-Սուլիզան, պ.պ. Պ. Գալանթա-
րեան, Ս. Մանդիլեան, Վ. Մամիկեան, և Լ.
Տիգրանեան և ուրիշներ: Տեղերի գները կը յայտ-
նենք հետեւեալ համարում:

Գերմանացին յիմար մարդուն «schafskopf»
(օշխարի գլուխ) է անուանում,—իսկ հայը յիմար
մարդուն «իշի գլուխ» է ասում:

Լատիներէն ad calendas grecas,—հայերէն՝
«իշի դատկիւն»:

Մի շատ ժլատ և չարից դուրս ինայող մար-
դու մասին հայը ասում է՝ «ստակած էշեր է
փնտռում, որ նալները հանէ»:

Եթէ ուղում էք ասել որ հնար չը կայ նեղ
գրութիւնից դուրս գալ, կամ հնար չը կայ մի
գործ իր ընկած գրութիւնից հանել,—հայերէն
պէտք է ասել՝ «արի ու էշը ցնելից հանիր»:

Изъ поповъ въ диаконы аотисаг առաձին
համապատասխանը միայն հետեւեալն է հայերէ-
նում՝ «էշի վրա նստել մէկ ամօթ, վեր գալն
էլ միւս ամօթ»:

Какъ попь, таковъ и приходъ,—հայերէն՝

Ռուսաց լրագիրները հաղորդում են, որ նե-
թադրութիւն կայ թող տալ կանանց ծառայել
պետական երկաթուղիների վարչութիւններում:
Անդրկովկասեան երկաթուղու վարչութիւնն էլ
հարցմունք է ստացել Պետերբուրգից արդեօք վար-
չութեան կարծիքով՝ որքան թուով կանայք կարող
են ընդունված լինել երկաթուղային պաշտօննա-
ների ընդհանուր թիւի համեմատ: Ռուսաստանի
երկաթուղային վարչութիւնները մեծ մասի կար-
ծիքն է թէ կին-ծառայողները թիւը կարող է լի-
նել մինչև 30 պրօցէնտ ծառայողների ընդհա-
նուր թիւից:

«Русск. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ
Շէշերին գրուածների առաջին հրատարակու-
թիւնը վերջանալու վրա է: Այս օրերս լոյս կը
տեսնի տաղանաւոր հեղինակի գրուածների
8-որդ հատորը, որը պարունակում է իր մէջ
«Сказки», «Пестрыя Писыма» և «Мелочи Жизни»
գրուածները, իսկ փետրվար ամսին լոյս կը տես-
նի 9-որդ հատորը:

Մեզ հաղորդում են Պարիզից, որ Փրանսիա-
կան մարտազարքի հայ գաղթականութիւնը այս
օրերս կորցրեց իր նշանաւոր անդամներից մի-
նին, այն է պ. Յովհաննէս Թընկերանին: Հանգու-
ցեալը կաթօլիկ դաւանութեան էր պատկանում
և ուժ տարուց աւելի է արդէն, որ բնակվում էր
իր ընտանիքով Պարիզում, որտեղ առեւտրով էր
պարապում:

Անցեալ 1889 թիւ դեկտեմբերի 18-ին, ինչպէս
հաղորդում են առաջ բժշկական լրագիրները, ՊԵ-
ՏԵՐՊՈՒՐԻՎԻ զինուորական-բժշկական Ակադէմիան
տօնեց հրապարակական հանդիսաւոր ակտով իր
83-ամեայ տարեդարձը: Այս օրպէս Ակադէ-
միայում կան 26 պրոֆէսորներ, 36 պրիվատ-դո-
ցէնտներ և 112 բժիշկներ, որոնք պարապում են
Ակադէմիայում կատարելագործելու նպատակով:
Անցեալ թիւին Ակադէմիայի ուսանողների թիւը
906 էր, իսկ բժշկագետի քննութիւն տուողների
թիւը 98 էր: Անցեալ տարվայ ընթացքում Ակա-
դէմիան ծանր կորուստներ կրեց. վախճանվեցան
հայ չորս ամենայայտնի պրոֆէսորներ՝ Բոսլին,
Բողաճովսկի, Գորբուսովին և Լէշ: Չորս ամբի-
օններ թափուր են մնում:

«Медицинская Бесѣда» հանդէսը հաղորդում
է, որ կուրսիկ նահանգական գէմատուն նշանակեց
պահեստի գումարից 50 հազար ռուբլի՝ հողեկան
հիւանդների հիւանդանոցի հիմնարկութեան հա-
մար: Հիւանդանոցը կունենայ 100 անկողին-
ներ:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Ամիսս 14-ին տեղի
ունեցաւ գաւառապետի նախագահութեամբ քա-
ղաքային դէպուտատի ընտրութիւնը: Ընտրու-
թեանը մասնակցում էին հասարակութիւնից ըն-
տրված 80 պատգամաւորներ: Սրանք, առանց
տեղեկանալու թէ քաղաքը անցեալ տարի որքան
նկատուտ է ունեցել, որքան ծախս է ունեցել,
որքան փող է մնացել կասսայում, պարտք ունի
արդեօք քաղաքը, դէպուտատը ինչ է արել քա-
ղաքի բարելաւութեան համար և այլն, մի խօս-
քով առանց մանրամասն հաշիւ պահանջելու,—
ընտրեցին, առանց գաղտնի քուէարկութեան,

օրիշ կերպ չէ կարելի ասել, եթէ ոչ՝ «Տէրն ինչ
ա, օր էշն ինչ լինի»:

Եթէ ուղեւոր հայերէն թարգմանել «ЧЕГО ТЫ
ОСТОЛБЕНЪ?» ուսուսաց ասացուածը,—պէտք է
ասել՝ «Ինչ ես իշացած մնացել»:

Երբ որ անսպասելի կերպով մի որ և է վատ
հոտ է դիպվում հայի թթին,—հայի ամենարնա-
կան բացականչութիւնը լինում է՝ «Այդ ինչ վատ
հոտ է, կարծես էշ են խանձում»:

На бѣднаго Макара и пипки валяется,—հա-
յերէն՝ «Հանդարտ էշի վրա ջուխտ-ջուխտ են
նստում»:

Մի մարդու մասին, որը ամեն տեղ խցկվում է,
հայերէն ասում են՝ «առանց իշի գլուխ հար-
սանիք չի լինի»:

Семья не безъ урода,—հայերէն՝ «երուսաղէ-
մունն էլ էշ կը գանկի»:

նախկին դէպուտատին նոյն պաշտօնի համար՝ մի
տարով ևս: Այս երկուքը ցոյց է տալիս, թէ
չուշիցք որքան անտարբեր են վերաբերվում դէ-
պի իրանց հասարակական գործերը»:

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՑ և հետեւեալը. «Թե-
մական դպրանոցի ուսուցիչները զեռ ևս չեն ըս-
տացել ամառվայ 2 1/2 ամսվայ ուսուցիչները, որով-
հետև հին հողաբարձութիւնը դպրանոցապատկան
զուտաբը, որ մի քանի հազար ռուբլի է, չէ յանձ-
նում նորընտիր հողաբարձութեան, որպէս զի
սա այդ փողից ուսուցիչների ուսուցիչները վճարէ:
Այդպիսով մի երկու պարտնների քանահաճութեան
պատճառով տասնեակ ուսուցիչներ իրանց ըն-
տանիքներով ստիպված են պարտքերի մէջ լըը-
վել և անելանելի կացութեան մէջ դնել թէ ի-
րանց անձը և թէ իրանց ընտանիքը: Չենք հաս-
կանում, թէ հին հողաբարձութիւնը ինչ իրա-
ւունքով դպրոցապատկան զուտաբը չէ կամենում
մինչև այժմ յանձնել նոր հողաբարձութեան»:

Ամիսս 20-ին, ինչպէս մեզ գրում են Շուշուց,
այդ քաղաքի ուսուցչական խումբը, մասնակցու-
թեամբ ա. Առաքելեանի և օր. օր. Առաքելեանի
ու թարուսանի, դպրանոցի աղքատ աշակերտ-
ների օգտին կը ներկայացնի «Պէպօ» և «Լըսթ-
կըթ» պիեսները: Տօմսակները աղողութեամբ
են ծախվում:

Վրաց «Իվերիա» լրագիրը հաղորդում է, որ
օրանից մի քանի օր առաջ թիֆլիսի Սապէր-
նայա կոչված փողոցում գտնվող մի պանդոկի
մէջ յայտնվեց սև հարիւնք հիւանդութիւնը, և
այժմ այդ հիւանդութիւնը աւելի զարգացաւ,
այնպէս որ յիշեալ փողոցում ուժ խանութները
մէջ էլ յայտնվեց սև հարիւնք հիւանդութիւնը:
Ամիսսպէս ուժ խանութներն էլ փակվեցան.
իսկ խանութատէրերին տարան քաղաքային հի-
ւանդանոց:

ԳՆԱՉԱԿԻՑ մեզ ուղարկված է հետեւեալը տպա-
գրելու համար «Մշակի» յունվարի 18-ի համարում
տպված, Գանձակից հաղորդած իմ լուրի մէջ՝ մտած
է սխալուածը. փոխանակ «Սարկաւազ Գարութիւն
Տէր-Գառնի էլեանց, որը ստանում է իր
ընթերցարանի համար 22 պարբերական հրատա-
րակութիւններ», գրված էր «պ. Թ. Ղարաբեան
որը տալիս է ընթերցարանին 22 այլ և այլ պար-
բերական հրատարակութիւններ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՎ ԵՑՄԱՐԻԱՅԻՑ

Յիւրիս, 18/6 յունվարի

Այս տարի յունվարի 12-ին Յիւրիսը տօնում
էր իր մեծ քաղաքացու յիշատակը: Այո, 1746
թ. յունվարի 12-ին էր, երբ ծնվեց Յիւրիսում
Հէյրիս Պետաւոյցի, որին վիճակված էր յեղա-
փոխել հիմնովին մինչև իր ժամանակը տիրող
դաստիարակութեան եղանակը և մի և նոյն ժա-
մանակ հաստատել նորադոյն մանկավարժու-
թեան առաջին հիմնաքարը: Թէպէտ նրանից
առաջ գտնվեցան մանկավարժներ և ազատ

Երբ որ հայը ուղում է հասկացողութիւն տալ
ձեզ մի հարստացած աւամիկ մարդու մասին,—
նա ասում է՝ «նոյն էշն է մնացել, միայն փա-
լանը փոխել է»:

Մի յիմար, բայց մի և նոյն ժամանակ խորա-
մանկ մարդուն հայը (և վրացին էլ, քանի որ է-
շերը կարծես միակ կենտրոնակէտ են կազմում,
որի վրա միանում են հայի ու վրացու հակու-
մները) անուանում է՝ «էշ-ստանայ»:

Слона-то и не примѣтять,—հայերէն՝ պէտք է
ասել՝ «մեծ էշը ախռուսն է մնացել»:

Баснями соловья не кормятъ,—հայերէն՝ «էշ
մի մեռի, ետնվա կը դայ»:

Եւ այլն և այլն...
* * *

Մի խօսքով հայը իր առաձեռնորում մի գրու-
մ էշերի հետ դորձ ունի:

որով Բեյութենին արվում է կամուրջնան տիտղոս Այսոր, քաղաքային դուռային դահլիճում, քաղաքացու Ի. Տուրչանինովի նախադառնությունը կայացու փոխադարձ ապահովության ընկերությունների ներկայացուցիչների ժողովի բացումը:

ԱՍՍՍԱՍՏ, 20 յունվարի: Մեշխեղի վրայով թէ՛հրանից լուր է ստացված, որ ժողովուրդը, բացի Շահի պալատի առջև արած ցույցերից, ցայցեր արեց և անգլիացիներին դէմ անգլիական ղեկավարության առջև Գեպան սըր Գրուսմոնդ-Վոլթ շտապ և բուրբուլին աննկատելի կերպով յունվարի 12-ին հնազանդ թէ՛հրանից:

ԿՈՒՐՍՈՒ, 20 յունվարի: Կուրսի արևելականների ժողովը, վիճարանություններից յետոյ, որոնց մասնակցում էին Ստոհանով, Եսկուչևիկ և Գանեվսկի պրոֆեսորները, միաձայն հակակարծիք են արձանակալ ժառանգական (заповѣдны) մանր կալուածներ հաստատելուն:

ՊԱՐԻՋ, 20 յունվարի: Այսօր առաւօտեան այտանդ հասաւ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայիւի Աւագը:

ՎԻԷՆՆԱ, 20 յունվարի: Սօֆիայից ստացված տեղեկություններին նայելով, անցեալ գիշեր ձերբակալված են մի քանի սպաներ, դրանց թուով և մայր Պանիցա: Չերբակալութեան պատճառները գաղտնի են պահվում: «Պոլիտիկ» լրագիրը Իտալիայի գործունէութեան եղանակը Արիստիտալում ներքաշար կերպով արժէք տուն մտնել է համարում և յայտ է արձանում, որ Իտալիայի այդ ապօրինի վարմունքը գոնէ դիպլոմատիական պատասխանատուութեան կենթարկվի:

ԲԵՐԼԻՆ, 20 յունվարի: Իշխան Բիմարկի հրատարակելու առևտրի միջնորդի պաշտօնից՝ ընդհանուր դարձանք առաջ բերեց: «Vossische Zeitung» լրագիրը ենթադրում է, որ բարձրագոյն վարչութեան պաշտօնեաների մէջ էլի նոր փոփոխություններ կը լինեն:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունվարի: Պետական խորհրդի անդամ Սոլովյովին շնորհված են Բարձրագոյն

հրովարտակի հետ միասին ս. Ալեքսանդր Նեվսկու ազամանդադարը շքանշանը: Երեկ տօնվեց սենատոր Յէէի 50-ամեայ պաշտօնավարութեան յօրեկանը: Յօրեկանին շնորհված է Ալեքսանդր Նեվսկու ազամանդադարը շքանշանը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍՍԱ Յունվարի 19-ին

Վճարների վրա 10 ֆունտ արժէք —	91	30
Բերլինի վրա 100 մարկ —	44	60
Փարիզի վրա 100 ֆրանկ —	36	20
Ռուսի արժէք —	7	31
Մաքսային կուպոններ —	146	50
Արծաթ —	1	8
Բորսային դիվիդենդներ —	6	70/0
Պետական 5% տոմս 1-ին շրջանի —	99	50
— 2-րդ —	99	50
— 3-րդ —	99	50
— 4-րդ —	99	50
— 5-րդ —	99	75
— 6-րդ —	99	50
Նոր 4% —	85	75
Արեւելեան 5% փոխառութիւն 1-ին շրջ. —	100	50
— 2-րդ —	100	62
— 3-րդ —	100	87
Ներքին 5% տոմսի փոխառութիւն կերպով —	229	50
5 1/2% ընդհանուր —	103	—
Ռուսիայի ընդհանուր —	164	—
Եսթլանդի կոնսոլիդ. փոխառ. —	137	—
Նոր կրկնվող ընդհանուր ընդհանուր —	99	75
5% գրաւակալ թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընդ. մաս. —	143	50
— թղթագր. —	94	—
Գրաւ. թղթ. Ալգու. բանկի —	99	—
Գրաւ. թղթ. Ռիսկի —	103	25
6% գրաւ. թղթ. Ռիսկի — 27 և 43 տ. —	—	—
— գրաւ. թղթ. 18 և 43 տ. —	—	—
Ս. Պետերբուրգի քաղաքային օրին. քաղաքային —	96	—
Մոսկուայի քաղաք. օրին. քաղաքային —	95	—
Օղէտայի —	95	87
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընդ. օրին. —	—	—
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է:	—	—

Խմբագիր-հրատարակող Գրիգոր Արմոնի

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ, որը հիմնադրուած է ռուսական լեզուի և ունի վկայական, ցանկանում է յարմար պաշտօն ստանալ: Հասցէն իմանալու համար կարելի է դիմել «Մշակի» խմբագրատուն:

1-4

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ: Չորեքշաբթի, յունվարի 31-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շոգենարը, նաւապետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) ղուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Սամսուն, Կ. Պոլիս և Մարսել: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին, Բաթումում Լէմբոլուրի տան, Նարեկէժուայա, և Թիֆլիսում Նախկին Ար. Տրուսի գալլերեում, № 114.

1-2 (2)

ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԳԻՄՆԱԶԻԱՅԻ

ԲԱՐՁՐ ԴԱՍԱՏԱՆ ՄԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՅԻ ՅԱՆԿԱՆՈՒՄ Է ԴԱՍԵՐ ՈՒՆԵՆԱԼ: Համաձայն է աշակերտների և աշակերտուհիների պատրաստել ստորին դասարանների համար, և կամ կրկնողութիւններ անել: Ցանկացողները իրանց հասցէն կարող են թողնել «Մշակի» խմբագրատանը:

4-5

Անհրաժեշտ եմ համարում հրատարակել յայտնել Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ԱՆԿԻՎԱՍՊԵԱՆ ԵՐԿԻՐ ՊՍՏԻՒՆՆԻՒՆՆԵՐԻ, որ մեր կոմիտեական գործն, որ սկսված է 1883 թ-ից շարունակվում է: Գործնայ սովորական համեմատ ընդունում եմ յանձնարարական պայմանով, ապրանքներ ստանալու ու ճանիկու հետեալ քաղաքներն. Ուզուն—ԱՒԱՑ, ՂԱԼԱԲԱԿԻ, ԱՍՄԱԲԱԹ, ՄԵՐՎ, ՉԱՐՍԻԱՍՏՈՒՐԱՐԱՑ, ԲՈՒԽԱՐԱ և ՍԱՄԱՐՂԱՆԻ, որտեղ և ունեմ կանտորներ, նոյնպէս և ԲԱԳՈՒՆ:

Նաև կատարում եմ ապրանքներ գնելու, ծախելու և ուղարկելու պատվերներ: Ցանկացողներն պայմանների մասին կարող են դիմել ինձ այս հասցէով ՅՅՄՆԵ-ԱԴԱ-ԱԼԵ ԵՐԿԻՐ ՆԱԶԱՐՈՎ.

7-12

ԵՐԿՐՈՒՆԵԱԼ ՀԱՄԱՍԱՐՄԱՍԱՐ

ՄԻՏՐՈՑԱՆ ԱՆԴՐԵՎԻԻՍ ՍԻԼԻՏՐԵՆՆԻԿՈՎ

Ընդունում է՝ առաւօտները 9-11 ժամը, երկշաբաթ 6-8 ժամը: Հասցէն, Սոլովայ Ֆրէյլինսկայա փողոց, տուն № 6.

5-5

Անհրաժեշտ եմ համարում հրատարակել յայտնել Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ մեր ԿՈՎԿԱՍՍ պատուելի ՀԱՑ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ, որ ես վերջին ժամանակներս ՄՕՍԿԱՑԻՑ տեղեկութիւններ եմ վԱՐՇԱՎԱՍ, և զարձեայ ընդունում եմ ամեն տեսակ յանձնարարութիւններ, մասնաւորապէս ԿԱՇՈՒԵԳՐՈՒ Լինելով, առնում եմ և ուղարկում եմ մի յարգելի վաճառականներին, ամեն տեսակ ԿԱՇՈՒԵԳՐԵՆ և զրա վերաբերեալ ապրանքներ: Ծանօթ եմ նոյնպէս զայնտեղիական և ուրիշ ապրանքների հետ իմ հասցէն. ՎԱՐՍԱՎԱ, Կոմասի ԿՐԿԱՅԻՆՆԻՑ. Սերբիա, ԴՈՄԵՆ № 3.

6-20 (6. 2.)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՄԱՅԱԿԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ և իր ամուսին ԹԵԿՂԵ ՄԿՐՏԵԱՆ ՏԵՐ-ԳԱԻԹԵԱՆՆԵՐԸ արտի ցաւով յայտնում են՝ առաջինը իր մօր և երկրորդը՝ իր սկեսոր ՀԵՂԻՆԵ ՄԵՍՐՈՒՅԱՆ ՏԵՐ-ԳԱԻԹԵԱՆԻ մահը և խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհ ընդհանուր յուղարկուածութեան, որը կը կատարվի շաբաթ, յունվարի 27-ին, առաւօտեան 10 ժամին, Թանդոյեանի տանից (Վերամիտոսկայա փողոց) դէպի Սոդնու սուրբ Գէորգ եկեղեցին: Ամբիճը կը կատարվի ուրբաթ, յունվարի 26-ին, երկշաբաթ ժամը 5-ին:

1-3

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1890 г. НА
ТЕХНИЧЕСКИЙ СБОРНИКЪ
 И
Вѣстникъ промышленности
 ЕЖЕМѢСЯЧНЫЙ ЖУРНАЛЪ
 открытый, изобрѣтений и усовершенствований по всемъ отраслямъ промышленности.
 Программа изданія:
 1. Правительственныя распоряженія и законенія, касающіяся фабрично-заводской промышленности, желѣзныхъ дорогъ и т. п. промышленныхъ предпріятій.
 2. Машиностроеніе и механическое дѣло.
 3. Механическая технология, — ручная и машинная обработка металловъ, дерева, волокнистыхъ матеріаловъ и пр.
 4. Химическая технология.
 5. Желѣзнодорожный отдѣлъ.
 6. Архитектура. — Инженерное и строительное искусства.
 7. Электро-техническій отдѣлъ.
 8. Санитарное дѣло.
 9. Кустарный отдѣлъ.
 10. Графическія искусства.
 11. Техническое образованіе.
 12. Обзорніе дѣятельности торгово-промышленныхъ учрежденій и техническихъ обществъ.
 Биографіи выдающихся дѣятелей техники и промышленности.
 13. Критика и библиографія.
 14. Смѣсь: Технические замѣтки о новостяхъ техники, рецепты, совѣты, описанія различныхъ новыхъ составовъ и средствъ, патентованныя и секретныя средства и пр.
 15. Справочный отдѣлъ: вопросы и отвѣты, торговли свѣдѣнія; статистическія свѣдѣнія: данныя о спросѣ и предложеніи. Свѣдѣнія о новыхъ привилегіяхъ.
 16. Объявленія въ текстѣ и въ видѣ особыхъ приложений.
 Приложенія: чертежи, книги, брошюры спеціальнаго характера.
 Примѣчаніе. Непремѣнное помѣщеніе въ каждомъ выпускѣ журнала статей по всемъ отдѣламъ не обязательно.
 Подписная цѣна: на годъ съ доставкой и пересылкой 16 руб.; на полгода — 9 руб.
 Адресъ редакціи: Москва, Малая Дмитровка, д. Алексѣевой. Редакторъ-Издатель Ученый Инженеръ-Механикъ
 К. А. Казначеевъ.

1-3

ԹՂԹԻ ՊԱՆԵԱՍ

ԲԱՐՁՐԱԿՈՑԵ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԴԻՏԻԱՏԿՈՎՍԿՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ունի փաստի, գրելու, գրքերի, լրագիրների, ծխախոտի զոյնաւոր, կազմի և ուրիշ տեսակ թղթեր, ծախվում են զործարանի գնով: Կան նոյնպէս և մեծ քանակութեան գրելու պարագաներ:

Թիֆլիս. Կիլոցովայա փողոց. Ազնուական կալուածական բանկի շինութեան մէջ:

3-20

Abonnementseinladung an
 die meist verbreitete deutsche Wochenschrift:
Das Echo
 (Stimmen aus allen Parteien.)
 Wochenschrift für Politik, Literatur, Kunst und Wissenschaft.
 Das Echo bringt allwöchentlich in unterhaltender Form Berichte über alle politischen, wirtschaftlichen, wissenschaftlichen und gesellschaftlichen Vorgänge, welche sich in Deutschland und Auslande abspielen.
 Das Echo ist kein Parteiblatt, sondern es läßt die interessantesten Stimmen aller Parteien zu Worte kommen.
 Das Echo widmet außerdem dem Leben der hohen Kreise eingehende Aufmerksamkeit.
 Das Echo bringt in jeder Nummer ein bis zwei abgeschlossene Novellen, Erzählungen u. s. w. aus der Feder bewährter, zeitgenössischer Schriftsteller.
 Das Echo bringt informierende Notizen, Kritiken und Leseproben aus den bedeutendsten Erscheinungen des internationalen Büchermarktes.
 Das Echo betrachtet es insbesondere als seine Aufgabe, dem Leben und Treiben der Deutschen im Auslande die liebevollste Aufmerksamkeit zuzuwenden.
 Das Echo will somit unsern Landsleuten im Auslande ein „Votum aus der Heimat“ sein, deshalb ist auch sein Abonnementpreis ein sehr niedriger. Es versendet die Expedition in Berlin S. W. das Echo nach allen zum Weltpostverein gehörigen Ländern für 4 Mark 50 Pf. vierteljährlich und für 17 Mark ganzjährig, nach den Ländern und Gebieten außerhalb des Weltpostvereins für 23 Mark ganzjährig. — Zahlungen geschehen am einfachsten und sichersten durch Postanweisung oder durch Anweisung auf deutsche Banken. — Ebenso liefert jede deutsche Buchhandlung und Zeitungsagentur im Auslande das Echo zu den landesüblichen Preisen. Probenummern sind durch die letzteren zu beziehen oder auch direkt von
 J. G. Schorer,
 Verlag des Echo, Berlin S. W.